ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/146

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.09.2018թ. թիվ 01.1/26-3/17512-18 գրությամբ Ա/Ձ Վահրամ Ջանիկի Պետրոսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Ջրային կոմիտեի 19.09.2018թ. թիվ 02/3130-18 գրության հիման վրա, 27.09.2018թ. թիվ 01.1/26-3/17512-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Վահրամ Ջանիկի Պետրոսյանին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Վահրամ Ջանիկի Պետրոսյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Վահրամ Ջանիկի Պետրոսյանը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Ջրային կոմիտեի» կարիքների համար կազմակերպվել է «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 15.08.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև Վահրամ Պետրոսյան Ա/Ձ-ն և 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշյալ հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից 03.09.2018թ. տրվել է եզրակացություն, համաձայն որի Վահրամ Պետրոսյան Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (15.08.2018թ.) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ (334 334 ՀՀ դրամ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.09.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 3 կետի համաձայն՝ 03.09.2018թ. ստացվել է համապատասխան տեղեկատվություն, համաձայն որի Վահրամ Պետրոսյան Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ:

Այնուհետև՝ հանձնաժողովը որոշել է «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա» ծածկագրով Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններում 1-ին տեղեր զբաղեցրած «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ի և Վահրամ Պետրոսյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները լիարժեք գնահատելու համար, առաջարկել ընկերություններին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.09.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Վահրամ Պետրոսյան Ա/Ձ-ն ներկայացրել է հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների կատարած աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

Նույն արձանագրության 3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է Վահրամ Պետրոսյան Ա/Ձ-ի հայտը մերժել, համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 44-րդ կետի և «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա» ծածկագրով հրավերի 7.15 կետի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 12 ապրիլի 2016թ. N18-Ն հրամանով հաստատված՝ «Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգ»-ի համաձայն՝ բողոքը քննելիս՝ գանգատարկման հանձնաժողովը ղեկավարվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով:

Աշխատակարգի 22-րդ կետի համաձայն՝ գանգատների քննարկման արդյունքում գանգատարկման հանձնաժողովն իրավասու է ընդունելու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածով, ինչպես նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 293-րդ հոդվածով սահմանված որոշումներ:

Իր հերթին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի համաձայն՝ վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը, բացառությամբ՝

ա) օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման.

բ) այն դեպքերի, երբ անհապաղ կատարումն անհրաժեշտ է հանրային շահերից ելնելով:

1). Ինչպես արդեն նշվել է, Վահրամ Պետրոսյան Ա/Ձ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (15.08.2018թ.) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային տեսչություն-վարչության աշխատակիցների կողմից կատարված ստուգումների հետևանքով:

Այսպիսով, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 13.08.2018թ. ստանալով Վահրամ Պետրոսյան Ա/Ձ-ի ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովին ուղղված բողոքը՝ պետք է առաջնորդվեր՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածով, այն է՝ կասեցներ բողոքարկվող վարչական ակտի (տվյալ դեպքում՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային տեսչություն-վարչության կողմից կազմված ակտը) կատարումը՝ մինչև ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից որոշում կայացնելը:

Մինչդեռ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությամբ Վահրամ Պետրոսյան Ա/Ձ-ին 15.08.2018թ. օրվա դրությամբ վերագրվել է այնպիսի ժամկետանց հարկային պարտավորություն, որը առաջացել է դեռևս բողոքարկվող վարչական ակտի հիման վրա, ինչը հանդիսանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի խախտում:

Նման պայմաններում ստացվում է մի իրավիճակ, որ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեն տրամադրելով եզրակացություն՝ Վահրամ Պետրոսյան Ա/Ձ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (15.08.2018թ.) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի պահանջները և արդյունքում ներկայացրել այնպիսի եզրակացություն, որը չի համապատասխանել իրականությանը:

Արդյունքում, Վահրամ Պետրոսյան Ա/Ձ-ին վերագրվել է վերահսկվող եկամուտների գծով այնպիսի ժամկետանց հարկային պարտավորություններ, որոնք դեռևս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (15.08.2018թ.) եղել են բողոքարկված (բողոքարկվել է 13.08.2018թ.) և կասեցված, և միայն բողոքի վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից կայացված որոշումից հետո կիստակեցվեր վերոնշված ակտի արդյունքում առաջացած վճարի ժամկետանց լինելու փաստը:

Մասնակիցը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ. Անանյանին խնդրել է Վահրամ Պետրոսյան Ա/Ձ-ի կողմից տվյալ գնման ընթացակարգի շրջանակում թույլ տված վարքագիծը քննելիս՝ հաշվի առնել, որ Ա/Ձ-ն գիտակցել է, որ իրեն վերագրված հարկային պարտավորությունը առաջացրած վարչական ակտը վարչական կարգով բողոքարկված է, ուստի Վահրամ Պետրոսյան Ա/Ձ-ն, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածը, համոզված է եղել, որ նշված ժամկետանց հարկային պարտավորությունը դրա ուժով կասեցված է:

2). Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում

հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.09.2018թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ միաժամանակ արձանագրել է Վահրամ Պետրոսյան Ա/Ձ-ի մասնակցության հետ կապված երկու խնդիր՝ նախ, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունների առկայություն, և երկրորդ՝ անհամապատասխանություններ որակավորման փաստաթղթերի հետ կապված:

Այնուամենայնիվ, արձանագրելով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունների առկայությունը, գնահատող հանձնաժողովը տվել է շտկելու հնարավորություն միայն որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի մասով, չտալով շտկելու հնարավորություն վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունների մասով: Մինչդեռ ակնհայտ է, որ վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունների առկայության պայմաններում մասնակցի հայտը ընդհանրապես չի կարող գնահատվել բավարար՝ Կարգի 44-րդ կետի ուժով, այն տվյալ պահին ենթակա էր մերժման, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Վահրամ Պետրոսյան Ա/Ձ-ին ներկայացված պահանջը՝ սահմանված ժամկետում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, ոչ իրավաչափ է և հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Մասնակիցը խնդրել է Վահրամ Պետրոսյան Ա/Ձ-ին չվերագրել «Գնումների մասին»ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/146 ընթացակարգի շրջանակներում 02.10.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Ջրային կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ջրային կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.09.2018թ. թիվ 02/3130-18 գրությամբ հայտնել է, որ Ջրային կոմիտեի կարիքների համար 08.08.2018թ. կազմակերպված «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.08.2018թ. N 4 որոշմամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ հարցում է ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և 03.09.2018թ.-ին ստացվել է համապատասխան տեղեկություն, համաձայն որի Վահրամ Պետրոսյան Ջանիկի Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Վերը նշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.09.2018թ. N 6 որոշմամբ՝ Վահրամ Պետրոսյան Ջանիկի Ա/Ձ-ի հայտը մերժվել է՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով առկա օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորությունների հիմքերով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/146 ընթացակարգի շրջանակներում 02.10.2018թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2018/146 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/146 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ջրային կոմիտեի կողմից Ջրային կոմիտեի կարիքների համար կազմակերպվել է «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 15.08.2018թ. հայտ է ներկայացրել Վահրամ Պետրոսյան Ջանիկի Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.08.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Վահրամ Պետրոսյան Ջանիկի Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 03.09.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***Վահրամ Պետրոսյան Ջանիկի Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 334 334 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.09.2018թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ Մասնակցի հայտը մերժվել է:

5. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 18.10.2018թ. թիվ 1/6-1/62564-18 գրության համաձայն՝ Ա/Ձ Վահրամ Պետրոսյանը 15.08.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի:

5<u>. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.09.2018թ. թիվ 01.1/26-3/17512-18 գրությունը,

Ջրային կոմիտեի 19.09.2018թ. թիվ 02/3130-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 18.10.2018թ. թիվ 1/6-1/62564-18 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից

հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ»

որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ջրային կոմիտեի կողմից Ջրային կոմիտեի կարիքների համար կազմակերպվել է «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 15.08.2018թ. հայտ է ներկայացրել Վահրամ Պետրոսյան Ջանիկի Ա/Ձ-ն:

Մասնակիցը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.08.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Վահրամ Պետրոսյան Ջանիկի Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 03.09.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***Վահրամ Պետրոսյան Ջանիկի Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 334 334 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.09.2018թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ Մասնակցի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 03.09.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ Վահրամ Պետրոսյան Ջանիկի Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 15.08.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 334 334 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ Մասնակցի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 18.10.2018թ. թիվ 1/6-1/62564-18 գրությունը, որով ամրագրվել է, որ 06.07.2018թ. թիվ 4102482 ստուգման ակտով Մասնակցին առաջադրվել է տուգանք՝ 600 000 ՀՀ դրամի չափով (համաձայն՝ ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդված), որը ներառված է եղել 15.08.2018թ. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների առաջացման տեղեկանքում, սակայն Օրենսգրքի 398-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հարկային մարմնի իրականացրած հարկային հսկողության արդյունքներով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով հարկային պարտավորություններ առաջադրված լինելու դեպքում ստուգման կամ այլ վարչական ակտերը դառնում են անբողոքարկելի ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում և դրանցով արձանագրված հարկային

պարտավորությունները հարկ վճարողի կողմից ենթակա են կատարման՝ ակտն անբողոքարկելի դառնալու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում:

Նույն գրությամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն հայտնել է, որ ***15.08.2018թ. դրությամբ Ա/Ձ Վահրամ Պետրոսյանը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի:***

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ Ա/Ձ Վահրամ Պետրոսյանը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, սակայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից տրամադրված եզրակացության համաձայն՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն: Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ ***ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 18.10.2018թ. թիվ 1/6-1/62564-18 գրության համաձայն՝ Ա/Ձ Վահրամ Պետրոսյանը 15.08.2018թ. դրությամբ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, չի ունեցել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ:***

Այսիսով հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 18.10.2018թ. թիվ 1/6-1/62564-18 գրությունը գտնում եմ, որ Ա/Ձ Վահրամ Պետրոսյանը «ՋԿ-ԳՀԱՇՁԲ-18/5-Ա» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.09.2018թ. թիվ 01.1/26-3/17512-18 գրությամբ Ա/Ձ Վահրամ Ջանիկի Պետրոսյանին (ՀՎՀՀ՝ 49603365) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**